

Արձանագրություն N 2
Բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/125» ծածկագրով գնման
ընթացակարգի հանձնաժողովի նիստի
Протокол № 2

Заседания оценочной комиссии под кодом EQ-EAApDzB-24/125

ք. Երևան

06.05.2024թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին	
Նիստի նախագահող՝	Ա. Զոհրաբյան
Հանձնաժողովի անդամներ՝	Մ. Սեթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝	Դ. Կարապետյան

Նիստի անցկացման վայրը՝

Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 310 սենյակ

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/125» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.05.2024թ. ստացված հարցադրումները և 06.05.2024թ. դրանց վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

(Ա. Զոհրաբյան)

Հաշվի առնելով նիստին նախագահի մասնակցության անհնարինության, նիստը նախագահեց ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված թեկնածուն՝ Ա. Զոհրաբյանը:

1.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ հարցադրումները և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցադրում.

«Հարգելի գործընկեր խնդրում եմ տալ պարզաբանում տեխնիկական բնութագրի ներքոհիշյալ կետերի հետ կապված

1.« ...Ցանցի դուրս բերման հնարավորություն մանկական հետազոտությունների ժամանակ» խնդրում եմ պարզաբանել ի՞նչ ցանցի մասին է գնում խոսքը:

2. «...Ուղղահայաց Բուկի կանգնակի առկայություն» հաշվի առնելով այն որ Ձեր կողմից պահանջվող ռենտգեն համակարգի սեղանը պտտվող է և թույլ է տալիս կատարել հետազոտություն հիվանդի նաև կանգնած վիճակում ուստի Բուկի կանգնակի առկայությունը դառնում է անհիմաստ, բերում է սարքավորման անհիմն թանկմացմանը և հակասում է ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2րդ կետի 3րդ մասին՝ գնման առարկայի բնութագրերը «...պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»

3. Սարքավորումը պետք է լինի ԱՄՆ-ի, կամ Եվրոպական կամ Ճապոնական արտադրության, իսկ նշված երկրներից բացի այլ երկրի արտադրության դեպքում՝ մատակարարի կողմից պետք է պարտադիր ներկայացվի ՀՀ-ում առնվազն 3 խոշոր՝ 250 և ավել մահճակալային ֆոնդ ունեցող, 24-ժամյա ծանրաբեռնված ռեժիմով աշխատող բժշկական կենտրոնների կողմից 2 տարվա օգտագործումից բխող դրական եզրակացություն" Այս պահանջը ուղիղ կերպով խախտում է Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը, որտեղ ասվում է՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:» քանի որ նշված են կոնկրետ երկրներ(ԱՄՆ, Ճապոնիա), իսկ մնացած բոլոր երկրների արտադրանքի համար ստեղծվում է հավելյալ արհեստական խոչընդոտ:»

Պարզաբանում.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է պարզաբանում ներկայացրած հարցադրումներին.

1. խոսքը գնում է X Ray Greed կամ Ռաստր կոչվող բաղադրիչի մասին: ռենտգեն ճառագայթների հակացրման ցանցի մասին է խոսքը, որը օգտագործվում է ցանկացած ռենտգեն համակարգի մեջ, իսկ մանկական հետազոտությունների համար այն պարտադիր պետք է հնարավոր լինի հեռացնել:

2. Համակարգը պետք է թույլ տա կատարել հետազոտություն ինչպես պտտվող սեղանի վրա տարբեր


դիրքերով, այնպես էլ հատակին Բուկի կանգնակի դիմաց՝ ռենտգեն հետազոտման կաբինետի բազմաֆունկցիոնալ աշխատանքն ապահովելու, տեղաշարժման խնդիր ունեցող պացիենտների և աշխատանքի արագ կազմակերպման համար: Պատվող սեղանի վրա անհնար է իրականացնել լատերալ դեկոմպրեսիոն /պնևմոպերիտոնիումի ախտորոշում/ կարևորագույն հետազոտությունը, թույլ է տալիս կրծքավանդակի ռուտին հետազոտություններն իրականացնել ավելի արագ և այդ հետազոտության համար չձանրաբեռնել

սեղանը:

3. Տվյալ ձևակերպումն իրենից չի ներկայացնում պահանջ կամ հղում որևէ կոնտրետ երկրի, այլ ելնելով ունեցած փորձից լրացուցիչ երաշխիք է ստեղծում որակյալ և դիմացկուն սարքավորում ձեռք բերելու համար, չի բացառում որևէ երկրի արտադրանքի ներկայացում՝ հետևաբար չի կարող կիրառվել «կամ համարժեք» բառերը կամ դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի խախտում:


Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Նիստը նախագահող՝



Ա. Զոհրաբյան

Անդամներ՝



Մ. Սեթյան

Քարտուղար՝



Ա. Համբարձումյան